

48

Մ. Ա. ԶԵՐՆՈՎ

ԱՆԱՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ

ՅԵՒ Կ



ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳՅՈՒՂՇՐԱՏ

1935

ՅԵՐԵՎԱՆ

63-6

9-45

24 SEP 2010

Պրոպագանդայի քույր լեհիաների միացում

Մ. Ա. ԶԻՐԿՈՎ

ԱՆԱՏՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ
Յ Ե Վ
ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ԽՍՀՄ Հոգծողիւմ բնկ. Մ. Ա. Չերնովի գեկուցումը համամիութենական խորհուրդների 7-րդ համագումարում)

Գ.Մ.Ե. Յ ՍՈՒՅՍ
1985 թ.
25
ԱԳ
Մ. Ա. ԶԻՐԿՈՎ

.....

ԳՅՈՒՂՇՐԱՏ

1985

Յ Ե Վ Մ

Имя № 21898

JUL 2013 636
9-45

21.501

ՀՈՒՆԻՍՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ՎԴՐՈՇՈՒՄԸ ԿԵՆՍԱԳՈՐԾՎՈՒՄ Ե

2-րդ հնգամյակի պլանի համաձայն, մենք պարտավոր ենք ձիերի թիվն ավելացնել 11,2 տոկոսով, խոշոր յեղջերավոր անասունների թիվը՝ 60,9 տոկոսով, խոզերինը՝ 274 տոկոսով, վոչխարների ու այծերի թիվը՝ 84 տոկոսով և ընտանի թռչունների թիվը՝ 150 տոկոսով:

Հայտնի չե, վոր գյուղատնտեսության վերակառուցման շրջանում անասնապահությանը բոլոր ճյուղերից ավելի կորուստ կրեց: Գյուղատնտեսության անասնապահական ճյուղն ամենից ավելի հազեցված եր կուլակային տարրերով: Վերակառուցման տարիներին անասունները մորթելու համար մզվող կուլակային ագրոացիան արձագանգ գտավ նաև միջակների մեջ: Դրա շնորհիվ, 1929 թվականից մինչև 1932 թվականը ներտալայ, մեկ ունեյիմ անասնապահության բոլոր նյութերի անկում, ընդ վորում ձիերի թիվը 1929 թվականի 34,6 միլիոնից մինչև 1932 թվականն իջավ 19,6 միլիոնի, խոշոր յեղջերավոր անասունների թիվը 1929 թվականի 67,1 միլիոն գլխից մինչև 1932 թվականն իջավ 40,7 միլիոնի, խոզերինը 27,4 միլիոնից հասավ 11,6 միլիոնի, վոչխարների և այծերի թիվը 147,2 միլիոնից՝ 52,1 միլիոնի:

1933 րվականին ուրվագծվեց բեկում դեպի վերելք: Անասունների թվի նվազումը հասավ նվազագույն չափի, իսկ խոզերի թիվը 1933 թվի վերջերին, համեմատած նախորդ տարվա հետ, արդեն աճում ավեց, ճիշտ է, զատ աննշան՝ 500 հազար գլուխ:

Կուլակայության XVII համագումարին տված իր գեկուցման մեջ ընկ. Աստիկն ասել եր՝ «1934 թվականը պետք է գառնա և կարող է գառնալ դեպի վերելք տանող բեկման տարի ամբողջ անասնապահական տնտեսության մեջ»:

Մեր առաջնորդի այդ խոսքերն ամբողջովին հաստատվեցին: Շնորհիվ կուլակայության գյուղում վարած ճիշտ քաղաքականության և կուլեկտիվ տնտեսաձևի վերջնական ամրացման,

10 63-89

(10 63-89)

1934 թվականին մենք ունենք մթերատու անասունների բայտ-
սեստիկների անում:

Ներկայումս մենք ունենք հետևյալ նյութերը՝ անասնա-
պահության 1034 թվականի վիճակը բնորոշելու համար. նախ՝
հաշվառման լիակատար տվյալներ 1934 թ. առ 1-ն հուլիսի վիճակի
մասին, յերկրորդ՝ առայժմ դեռ վոչ լրիվ տվյալներ՝ 1935 թ.
առ մեկին հունվարի Համամիութենական վիճակագրությունից:
Այդ նյութերն առանձնապես արժեքավոր են նրանով, վոր հը-
նարավորություն են տալիս վորոշելու անասունների թիվը, հա-
մեմատած 1933 թվականի յերկու ժամանակվա համար՝ առ
մեկին հուլիսի ու առ մեկին հունվարի, և զրանով իսկ գտողափար
կազմել թե ինչ է տեղի ունեցել անասնապահության ասպարե-
զում 1933 թվականի աշնան շրջանում և 1934 թվականին
Այդ առանձնագրես կարևոր է այն պատճառով, վոր աշնան շըր-
ջանը սովորաբար հանդիսացել է ամենամեծ թվով անասուններ
մորթելու շրջան:

1934 թ. առ 1-ն հուլիսի հաշվառման տվյալներն այսպի-
սի պատկեր ունեն: Մենք, համեմատած 1933 թ. հուլիսի 1-ի
հետ՝ ունենք խոշոր յեղջերավոր անասունների թվի 10,6 տոկոս
աճում, խոզերի՝ 44,6 տոկոս, վոչխարների ու այծերի՝ 3,4 տոկոս
աճում. և միայն ձիերի նկատմամբ, վորոնց վրա յես մանրա-
մասնորեն կանգ կառնեմ հետո, մենք ունենք 5,5 տոկոս նվազում,
համեմատած 1933 թ. հետ:

1934 թ. հունիսի վերջերին և հուլիսի սկզբներին գումարվեց
Համ. Կ(բ) Կենտկոմի պլենումը, վորտեղ քննվեց անասնապա-
հությունը բարելավելու և զարգացնելու հարցը: Պլենումը մի
շարք գործնական ցուցումներ տվեց այդ հարցի շուրջը, և
առանձնապես սուր կերպով դրեց արդեն 1934 թ. աշնանը մատ-
ղաշները պահպանելու և զարգացնելու հարցը: Ընկ. Մոլոտովն
իր գեկուցման մեջ արդեն բերեց առայժմ վոչ լրիվ տվյալներ
անասունների վիճակագրության 1935 թ. առ 1-ն հունվարի
ստացված արդյունքների մասին: Այդ, կրկնում եմ, վոչ լրիվ
տվյալների համաձայն, անասունների թիվը կոլտնտեսային
գյուղացիական հատվածում 1935 թ. առ 1-ն հունվարի, համե-
մատած 1934 թ. հունվարի 1-ի հետ, ավելացել է խոշոր յեղջե-
րավոր անասուններինը՝ 21 տոկոսով, խոզերինը՝ 118 տոկոսով,
վոչխարների ու այծերի թիվը՝ 11 տոկոսով, իսկ ձիերի թիվը

նվազել է 3 տոկոսով, մինչդեռ կոլտնտեսություններում ձիերն
ավելացել են 8,5 տոկոսով:

Այդ համեմատությունից բխում է մի պարզ հետևություն՝
կենտկոմի պլենումի վարձումը կենսագործվում է: Անասունների,
մանավանդ մատղաշների մորթելը մեծ չափով կրճատվեց 1934
թ. աշնանը, համեմատած 1933 թ. աշնան հետ:

Սակայն գործնական այն հետևությունների համար, վոր
պետք է անենք մենք, վոչ մի դեպքում չի կարելի կանգ առնել
միութենական միջին թվերի վրա:

Խոշոր յեղջերավոր անասունների միջին աճը 1934 թ. կազ-
մում է 10,6 տոկոս: Բայց յեթե վերցնենք առանձին մարզեր
կամ հանրապետություններ, կատանանք այսպիսի պատկեր՝ Դը-
նեպրոպետրովսկի մարզը տալիս է 35,2 տոկոս աճ, Դրեմի ինքնա-
վար ՄՍՀ-ն՝ 32,7 տոկոս, Ողեսայի մարզը՝ 30,1 տոկոս, Իոնեցի
մարզը՝ 32,6 տոկոս, և այլն: Իրա հետ միասին, մենք ունենք
մի շարք մարզեր ու հանրապետություններ, վորոնք չնչին աճ
են ունեցել խոշոր յեղջերավոր անասունների հոտում, որինակ,
Կուրսկի մարզը՝ 3,3 տոկ., Բելոռուսիայի ՄՍՀ-ը՝ 2,6 տոկ., Լե-
նինգրադի մարզը՝ 5 տոկ., Թուրքմենստանի ՄՍՀ-ը՝ 0,9 տոկ.
Մուզրեկստանը՝ 1,7 տոկոս և, վերջապես, կան մի շարք մարզեր
ու հանրապետություններ, վորտեղ 1934 թվականին անասուննե-
րի թիվը վոչ թե ավելացել, այլ նվազել է, որինակ՝ Չերնիդո-
վի մարզում՝ 1,1 տոկոսով, Արևմտյան մարզում՝ 5,7 տոկոսով,
Գրնզոստանում՝ 8,4 տոկոսով, Կարակալպակիայում՝ 9,9 տոկոսով:
Ընդ նմին բնորոշ է, վոր ամենից հետ մնացող այն մարզերի
թվում, վորոնք 1934 թվականին ավել են անասունների թվի
կոմ չնչին աճ կամ նույնիսկ նվազում, գտնվում են արևելյան
անասնապահական մարզերը, վորոնց տեսակաբար կշիռն անասնա-
պահության մեջ մինչև 1928 թվականը շատ բարձր է յեղել:

Մոտավորապես նույն պատկերն ունի մթերատու անա-
սունների նաև մյուս տեսակի՝ խոզերի ու վոչխարների միկոսկր:
անասնապահության զարգացումն ամենատես կերպով կապված է
գաղտնագործարյան վերելի հետ և ամբողջովին կախված է այն ու-
շագրությունից, վորը նվիրում են տեղական կազմակերպու-
թյուններն ամբողջ գյուղատնտեսությանն ու մանավորապես
անասնաբուժությանը:

Շատ բնորոշ են այն փոփոխությունները, վորոնք տեղի
ունեցան յերկրում անասնապահության առխարնագրական սեղա-

բաժնուհատման մեջ: Արեւիլյան խոնոր անասնապահական մարզերը վերջին տարիներս նվազեցրել են իրենց տնտեսաբան կեանքը քան ինչպես անասնապահության մեջ: Ընդհակառակը, այն մարզերի խոնորը, վորոնք առաջ կոչվում էին սպառող գոտի, այժմ անցել են առաջավոր դիրքերը:

Իժմար չե տալ այդ փաստի բացատրությունը: Անասնաբուժական հիմնական ջրջաններում բեկերի և կուլակների ձեռքում կենտրոնացած եր անասունների հսկայական մաստան: Այսպեղ մենք ունեցինք բեկական տարրերի կատարի գիմարություն՝ գյուղի վերակառուցմանը, վորն առանձնապես ուժգին անդրադարձավ անասունների թվի վրա: Սակայն այժմ կարելի է նաև այն, վոր մենք անասունների թվի առավելագույն նվազում ունեցինք անասնապահական հիմնական մարզերում, վորտեղ կան կերի ամենահարուստ պաշարներ, և վոր անասնապահության բարձրագույն հարցում այդ մարզերը պետք են հատուկ տեղ գրավեն: Մարտական խնդիր է հանդիսանում անասնապահության հետագա աճումը, այսպես կոչված՝ սպառող գոտու ջրջաններում, այդ մարզերն սպառողից արտադրող մարզերի վերածելու ընդհանուր խնդիր կապակցությամբ: Սակայն առանձնապես մարտական խնդիր է բարձրացնել անասնապահությունը՝ անասնապահական հիմնական մարզերում:

2-րդ Հնդստանի մասցած 3 տարվա ընթացքում անասունների աճը, համեմատած 1934 թ, հուլիսի 1-ի հետ, պետք է կադմի-ձիերինը՝ 7,2 միլիոն գլուխ, խոշոր յեղջերավոր անասուններինը՝ 23,1 միլիոն գլուխ, խոզերինը՝ 26 միլիոն գլուխ, վոչխարներինը ու այծերինը՝ 44,1 միլիոն գլուխ:

Ընկ. Ստալինը կուսակցության XVII համագումարում գրծեց այդ խնդրի լուծման ուղիները: Նա առաջ՝ «Անասնապահության գործը պետք է իրենց ձեռքը վերցնեն ամբողջ կուսակցությունը, մեր բոլոր կուսակցական ու անկուս. աշխատողները, աչքի առաջ ունենալով, վոր անասնապահության պրոբլեմն այժմ նույնպես առաջնահերթ պրոբլեմ է, ինչպես նաև եր բեկ արդեն հաջողությամբ լուծված հացահատիկային պրոբլեմը: Ավելորդ է նույնիսկ ապացուցել, վոր խորհրդային մարզիկ, վորոնք մեկից ավելի լուրջ խոչընդոտներ են հաղթահարել զեպի նպատակը տանող ճանապարհին, կկարողանան հաղթահարել նաև այդ խոչընդոտը»:

Այժմ մեր խնդիրն է՝ մոբիլիզացիայի յինթարկել այդ գոր-

ծի համար բոլոր խորհրդային մարզիկանց, բոլոր կոլանտեսականերին, մենատեսակներին, բոլոր սղակներին, մանավանդ գյուղական խորհուրդներում աշխատողներին:

Պետական պլանը հզոր գործիք է անասնապահությունը պարզացնելու համար:

Այդպիսի պլան առաջին անգամն է մտցվում: Մեր անասնապահության մեջ անասնապահությունն այն միակ ճյուղն էր, վոր դարգացել է զգալի չափով տարերայնորեն, առանց պետական հաստատուն պլան ունենալու: Այդպիսի պլան հնարավոր չեղավ մտցնել շնորհիվ այն հանդամանքի, վոր սոցիալիստական հատվածն այժմ գերակշռող դիրք է գրավել գյուղատնտեսության մեջ:

Անասնապահության զարգացման 1935 թ. պետական պլանի հիմնում դրված է մատուցել անեցնելու պլանը: Պլանը հաստատուն առաջադրանքներ է սահմանում խորհանտեսություններում, կոլանտեսային ապրանքային ֆերմաներում, կոլանտեսականների ու մենատեսակների մոտ մատղաշներ պահպանելու և աճեցնելու համար:

Մատղաշների պահպանումը և աճեցումը հիմնական պայմանն է անասունների թիվը վերականգնելու համար:

Ուստի անասնաբուժության պետական պլանում գլխավոր շեշտը գրված է մատղաշների աճեցման վրա:

1935 թվականի պլանը նախատեսում է պահպանել ու աճեցնել 11,4 միլիոն հորթ, 16,6 միլիոն գառ և ուլ, 14,8 միլիոն խոճկոր և 2,1 միլիոն մորուկ:

Այդ կազմում է 1935 թվին ծնվելիք բոլոր անասունների ամբողջ մոտ յերկու յերրորդը:

Ըստ ինքյան հասկանալի չե, վոր մատուցել անեցնելու այդ առաջադրանքն միմիայն պատշադիր միմիումն է: Յուրաքանչյուր ջրջանի կոլանտեսության, գյուղխորհրդի, յուրաքանչյուր մարզի խնդիրն է՝ զգալի չափով վերահաստել պլանը:

Մատղաշներն աճեցնելու պլանի կատարումը մի հսկայական քայլ է անասունների հոտերը վերականգնելու և աճեցնելու համար: Նա կապահովի խոշոր յեղջերավոր անասունների աճը տարեկան 18,8 տոկոսով, ձիերինը՝ 9,3 տոկոսով, խոզերինը՝ 36 տոկոսով, վոչխարներինն ու այծերինը՝ 19,8 տոկոսով:

Իրագործելի չե արդյոք այդ խնդիրը:

Այն հանդամանքը, վոր հորթերի կորուստը 1932 թվականի

29,7 տոկոսից 1933 թվականին իջել է 19,7 տոկոսի և 1934 թվականին՝ 13,8 տոկոսի, խոճկորներինը 1933 թվականի 24,9 տոկոսից 1934 թվականին իջել է 14,4 տոկոսի, իսկ գառներինը 1933 թ. 12,2 տոկոսից 1934 թ. իջել է 9 տոկոսի, ըստ ինքյան վիայում է, վոր առաջադրանքն իրագործելի չե: Մակայն անասունների 1934 թ. կորստի տոկոսը դեռևս շատ մեծ է և այդ ասպարիզում ձեռք բերված նվաճումները դեռ շատ փոքր են: Անասունների կորուստը կարելի չէ և պետք է հասցնել զերոյի, կամ զերոյի մոտ չափի:

Բոլոր մարզերում, յերկրներում ու հանրապետություններում տարածված արանիների հսկայական թիվը ցույց է տալիս, վոր գործը բավարար հիմքերի վրա դրվելու ղեպքում, կոլտնտեսությունները, գյուղխորհուրդները և շրջանային աշխատողները-ամառաշններին հոգատարություն ցուցաբերելու ղեպքում ֆերմաները կարող են դերձ մնալ կորստից:

Կարելի չէ մեջ բերել արդեն ամբողջ շրջաններ, վորտնք արդեն շատ մեծ հաջողություններ են ձեռք բերել մատղաշների պահպանելու գործում: Որինակ՝ Հյուսիսային յերկրի Կուբի-հողորակի շրջանը պահպանել է մատղաշների 97,9 տոկոսը, Նե-նի շրջանը՝ 97,7 տոկոսը, Նիկոլակի շրջանը՝ 96,2 տոկոսը:

Ուկրայնայում հետազոտված 64 շրջաններում խոշոր յեղջի-րավոր անասունների մատղաշների կորուստն իջեցված է 3 տոկոսի, խոճկորներինը՝ մինչև 5 տոկոսի, գառներինը՝ 73 շրջան-ներում մինչև յերեք տոկոսի:

Այս թվերը վիայում են, վոր դրված խնդիրը՝ 1935 թվա-կանին մատղաշները աճեցնել և դրանով իսկ անասնապահու-թյան պետական պլանը կատարել հնարավոր է, յեթև, ի հարկե, ինքնահոսի վրա հույս չդնենք, յեթե բոլորիկորեն կատարենք պլանը և հասկանանք ապրանքային ֆերմայի դերը սոցիալիս-տական անասնապահություն մեջ, ամրացնենք ֆերմաները և դրազվենք նրանցով:

ԿՈՆՏՏԵՍԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒ- ԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԲԱԶԱՆ Ե

1931 թվականին, յերբ սկսեցին կառուցվել կոլտնտեսային ֆերմաները, մենք ունեյինք խոշոր յեղջիքավոր անասունների 8925 ֆերմա՝ 1.516.000 գլուխ անասունով: Առ 1-ն հուլիսի/1934

թվականի ֆերմաների թիվը հասավ 67.982-ի՝ 6.534.000 գլուխ անասունով:

Պողարուձական ֆերմաների թիվը, համապատասխանորեն, 6.494-ից հասավ 42.697-ի, իսկ նրանց անասունների թիվը 395.700-ից հասավ 2.996.000 գլխի:

Վոլխարուձական գրանցված ֆերմաների թիվը 1932 թվականին 1.961-ից 1934 թվականին հասավ 21.978-ի, իսկ նրանց անասունների թիվը 1.600.000-ից հասավ 9.184.000 գլխի:

Ձիարուձական ֆերմաների թիվը 1932 թվականի 1.479-ից 1934 թվականին հասավ 4.726-ի, իսկ նրանց անասունների թիվը՝ 106.000-ից հասավ 276.500 գլխի:

Կենտրոնի հունիսյան պլենումն ընդունեց մի վորոշում, վորի համաձայն պարաքանչյուր կոլտնտեսություն մեջ ֆերմա ստեղ-ծելը պետք է գառնա կուսակցական ու խորհրդային կազմակեր-պությունների առաջնահերթ խնդիրը»: Հունիսյան պլենումից հետո անցած վեց ամսվա ընթացքում խոշոր յեղջիքավոր անասուններ ունեցող ֆերմաների թիվը ավելացավ 34 տոկոսով, իսկ նրանց անասունների թիվը՝ տասը տոկոսով, խոշոր արուձական ֆերմանե-րի թիվը՝ 30 տոկոսով, իսկ նրանց անասունների թիվը՝ 23 տո-կոսով, վոլխարուձական ֆերմաների թիվը՝ 69 տոկոսով և նը-րանց անասունների թիվը՝ տասը տոկոսով: Մակայն այդ ուղղու-թյամբ դեռ շատ ու շատ աշխատանք կա կատարելու: Դեռ վոշ բոլոր կոլտնտեսություններն ունեն ապրանքային ֆերմաներ: 1934 թվականին յուրաքանչյուր հարյուր կոլտնտեսությանն ընկնում է 40,4 խոշոր յեղջիքավոր անասունների ֆերմա, 23,9 խոշարուձական ֆերմա, 16,3 վոլխարուձական և յերկու ձիա-րուձական ֆերմա: 1935 թ. մենք պետք է հասնենք կենտրոնի այն վորոշման կատարմանը, վորով ամեն մի կոլտնտեսություն պետք է ունենա այս կամ այն տեսակ անասունների ֆերմա:

Նոր ֆերմաների շինարարությունը և անասունների թվի ավելացումն ավելի մեծ պահանջներ են ներկայացնում աշխա-տանքի մյուս կողմին՝ թե գոյություն ունեցող և թե նոր կազ-մակերպվող ֆերմաների կազմակերպական-օնսեսապիտան ամրաց-մանը:

Ինչպես ամեն մի այլ գործ, կոլտնտեսությունների ու ապ-րանքային ֆերմաների զարգացումն ու ամրացումը նույնպես վնասում են մտքիկ: Ֆերմայի ձևով անասնապահական խոշոր տնտեսության ստեղծումը նոր գործ էր կոլտնտեսականների հա-

մար: Այդ գործը յուրացնելու համար, անհրաժեշտ եր յերեք տարվա ընթացքում բարձրացնել կոլտնտեսականների մեծ մասսայի վորակը: Ամեն տեսակ դասընթացների և շրջանային կոլտընտեսային դպրոցների միջոցով պատրաստվեց 87 հազար ֆերմայի վարիչ, 140 հազար անասնապահ բրիգադեր, 25 հազար անասնապահ տեխնիկ, 63 հազար անասնաբուժական սանիտար, 28 հազար խոզաբուժ, 33 հազար սիրոսագործ ու անասուն կերակրող, 102 հազար կով կթող և անասուն խնամող, 11 հազար հորթապահ, հովիվ և նախրապան, ընդամենը 1932—34 տարիների ընթացքում պատրաստվել և 500 հազար մարդ:

Սակայն, չնայած ֆերմաների զարգացման ու ամրացման ասպարեզում ձեռք բերված մեծ նվաճումներին, մենք դեռ բազմաթիվ թերուժյուններ ունենք:

Այն, ինչ վոր կարող ե տալ ապրանքային ֆերման, լրիվ ոգտադործելու համար, կարևորագույն նշանակություն և ստանում ռեսուրսների ուսցիոնայացվան և, մտնավանդ՝ թեկուզ ամենապրիմիտիվ մեթոդներով՝ աշխատանքը մեկենայացնելու հարցը:

Ֆերմաների ու կոլտնտեսությունների ղեկավարների միջոցն այդ ուղղությամբ չի աշխատում, մինչդեռ հարկավոր ե, վոր նա ուժգին թափով այդ ուղղությամբ աշխատի:

Բոլոր կոլտնտեսականները պետք ե հասկանան, վոր կոլտնտեսային ապրանքային ֆերման հանդիսանում ե կոլտնտեսության հանրային տնտեսության կարևորագույն ձևատամասերից մեկը և ամենաուժեղ զինքերից մեկը՝ կոլտնտեսությունն ամրացնելու ու նրա հարստությունն ավելացնելու դործում:

Ֆերմա չունեցող կոլտնտեսություններում ֆերմա ստեղծելը, ինչպես Տին, այնպես ել նոր ֆերմաների զարգացումն ու ամրացումը շատ խոշոր նշանակություն ունի իրականացնելու համար ընկ. Ստալինի այն լոզունզը, վոր բոլոր կոլտնտեսականներն ունենոր դառնան:

Մոտ ժամանակիս մեր խնդիրներն են.

1) Ուշի-ուշով ստուգել ֆերմաներն սպասարկող մարդկանց կազմը, ամեն կերպ առաջ քաշելով ավելի պտտասխանատու աշխատանքի և լայնորեն պարզատրելով սոցիալիստական անասնապահության լավագույն հարվածայիններին: Անողջաբար դուրս վանղել ֆերմայից լողրներին, գործալիքներին և այն մարդկանց, վորոնք բարեխղճորեն չեն կատարում անասունների

ըին խնամելու իրենց պարտականությունները և քայքայում են կոլտնտեսային անասնապահությունը:

2) Միջոցներ ձեռք առնել, վոր անսպասան կատարվի կազմավորության սահմանած այն դրույթը, վորի համաձայն կոլտընտեսային անասնապահական բրիգադները և ֆերմաների վարիչները պետք ե ամրացվեն աշխատանքին՝ առնվազն յերկու տարով, վոչ մի դեպքում թույլ չտալով անասնապահության հետ կապ չունեցող այլ աշխատանքի փոխադրել և այլ աշխատանքում ոգտադործել անասնապահական բրիգադներին, ֆերմաների վարիչներին և ֆերմաների սպասարկողներին:

3) Գործնականորեն իրականացնել այն դրույթը, վորք պահանջում ե ֆերմաներում աշխատանքի վարձատրությունը կադմակերպել խիստ գործավարձի հիման վրա:

4) Ապահովել կոլտնտեսային ֆերմաները գոմերով և անհրաժեշտ սարքավորումով:

5) Լրիվ ապահովել ֆերմաների անասուններն արոտավայրերով և կոշտ, հյութալի ու խտացրած կերով:

6) Ֆերմաներում խստիվ կատարել անասունների պահպանության ու խնամքի, անասնապահական և անասնաբուժական կանոնները: Կադմակերպել ֆերմաներում անասունների ամենահոգատար հաշվառումը, թույլ չտալով շտալել ֆերմաների անասունները և անկոնարտ ծախսել ֆերմաների անասուններից ստացվող մթերքները:

7) Միջոցներ ձեռք առնել, վոր ֆերմաները բարեխղճորեն ու կանոնավոր կերպով կատարեն պետությանը մթերք հանձնելու իրենց պարտավորությունները:

ՎԵՐԱՑՆԷԼ ԿՈՎԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՎԵԼԱՑՆԵԼ ԱՆՀԱՏԱՊԵՍ ՈՐՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

Չնայած անասնապահության սոցիալիստական հատվածի արագ աճմանը, այնուամենայնիվ յերկրում գերակշռում են կոլտնտեսականների ու մենատնտեսների անասունները: Կոլտնտեսականներն ու մենատնտեսներն անձնապես ոգտադործելու համար առ մեկն հուլիսի 1934 թ. ունեյին 26,5 միլիոն խոշոր յեղջերավոր անասուն, կամ 62,4 տոկոսը, 28 միլիոն վոչխար ու այծ կամ 54 տոկոսը և 8,1 միլիոն խոզ կամ 45,6 տոկոս: 1934 թվականին զգալի չափով աճել և կոլտնտեսականների անասնապահու-

Թյունը: 1933 թվականի հունիսին կոլտնտեսականներն ունեցին 4,9 միլիոն հորթ, 1934 թվականին՝ 6,1 միլիոն. 1933 թվականին կար մինչև չորս ամսական խոճկոր 2,2 միլիոն գլուխ, 1934 թվականին 3,4 միլիոն. գառ և ուլ 1933 թվականին կար 8,7 միլիոն գլուխ, 1934 թվականին՝ 9 միլիոն:

Այնուամենայնիվ այժմ էլ Միության մեջ կովազուրկ կոլտնտեսականների թիվը հունիսի հաշվառման տվյալներով կազմում է 40,5 տոկոս, իսկ տարվա վերջին կովազուրկ կոլտնտեսականների թիվը կկազմի մոտ 32 տոկոս:

ՀԱՄԿ(Բ)Կ. Կենտկոմի հունիսի պլենումը խնդիր դրեց առաջիկա յերկու տարում վերացնել կոլտնտեսականներին կովազրկությունը: Առդեն անցյալ տարի կովազուրկ կոլտնտեսականները պետությունից յուրջ ոգնություն ստացան կով ձեռք բերելու գործում: 1933 թ. վերջերին և 1934 թվականին կոլտնտեսականների հետ կնքված կոնտրակտացիայի մեջոցով և ֆերմաներում կատարված գնումներով կովազուրկ կոլտնտեսականներին հանձնվել է մոտ 1,5 միլիոն հորթ և յերկու միլիոնից ավելի խոճկոր: 1934 թ. յերկրորդ կիսում և 1935 թ. առաջին յիսամսյակում կովազուրկ կոլտնտեսականներին հանձնելու համար կոնտրակտացիայի յե յենթաբաժնիկները յերկու միլիոն գլուխ և, բացի դրանից, 1935 թվի համար նախատեսված պլանով յորոհանտեսություններից ու կոլտնտեսային սպրանքային ֆերմաներից վաճառվելու յե 470 հազար հորթ, յերկու միլիոն 950 հազար խոճկոր և 700 հազար գառ:

Միության մարզերի ճնշող մեծամասնությունը, մասնավորապես այսպես կոչվող սպառող շրջանի բոլոր մարզերը՝ Արևմուտյան ու Արևելյան Միքիբը, Սվերդլովի մարզը, Թաթարական ինքնավար Մեձ և Բաշկիրիայի ինքնավար Մեձ լրակատար հնարավորություն ունեն արդեն 1935 թվականին կատարելապես վերացնելու կոլտնտեսականների կովազրկությունը, իսկ մնացած մարզերում՝ 1936 թվին:

1935 թվականին առաջին անգամ տրվում է կոլտնտեսականների ու մենատնտեսների կողմից մատղաշ անասուններ անեցնելու պլանը: Այդ պարտավորեցնում է տեղական քրդաններին՝ ամենայն լրջությամբ վերաբերվել այդ գործին: Այստեղ կհանդիպենք մի շարք բարդ գործնական հարցերի: Առաջին հարցն է՝ մեժ և լինչպես առաջադրանք տալ մատղաշներ անեցնելու համար: Անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր առանձին տնտեսության յուրատեսակ առանձնահատկությունները,

մատղաշներ անեցնելու պլանը սերտորեն շաղկապել պետությանը պարտադիր կերպով միս հանձնելու պլանի կատարման հետ:

ՎԵՐՋ ՏԱԼ ԶԻՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՆՓՈՒՅՓ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՆ

Չնայած կենտկոմի և Ժողկոմխորհի բոլոր վորոշումներին, չնայած վոր յուրաքանչյուր մարզային գործկոմ և մարզային հորդային վարչություն արտադրում են այդ վորոշումները և յրեկնցներթին ամեն, անասկ դերեկաթիվներ ու հրամաններ են ուղարկում, ձիարումության գրությունը շարունակում է անբարեհաջող մնալ: Մարզերում ու շրջաններում շատերը յերկի վճախ են, թե վորքան ավելի արակտոր է ուղարկվում նրանց, այնքան քիչ պետք է մտածեն նրանք ձիու մասին, և դա սալիս և յր հետևանքները: Այն ամենը, յինչ վոր կատարվում է ձիու ջուրջը, ձեկարելի բացատրել վոչ մի այլ բանով, բայց յեթե ձիու հանդեպ ցնեցարերվող հանցավոր անհողությամբ, անիութությամբ ու անուշադրությամբ և կառավարության ու կուսակցության վորոշումներին ցույց տրվող ձեական վերաբերմունքով:

Պարզ է, վոր այստեղ ամեն ինչ դեժ է առնում մարդկանց կողմից ձիուն ցուցաբերվող վերաբերմունքին:

Առաջին հերթին ձիուն ցուցաբերվող այդ ուշադրությունը պետք է դրեալորվի բեղմնավորման կամպանիայի ձիշտ յրակահնացման մեջ: Յես կկարգում ձեղ հետեյալ թվերը: 1932 թվականին բեղմնավորված էր հաշվվում 2.300.000 գլուխ գամբիկ, նրանցից 1933 թվականին ծնվեց միայն 783.000 մարուկ: Հարց է ձագում վճրտեղ են այն մտրուկները, վորոնք պետք է ստացվեյին գամբիկների բեղմնավորված համարվող թվից: 1933 թվականին բեղմնավորված էր համարվում յերեք միլիոն 170 հազար գամբիկ, նրանցից ծնվեց 1934 թվականին միայն մի միլիոն 97 հազար մտրուկ: Բանն յնչձեմն է, ընկերներ: Այստեղ բանն այն է, վոր, նախ բեղմնավորված գամբիկների վերաբերյալ մեղ մոտ յեղած թվերի վրա հսկողությունը բացակայելու պատճառով, այս տարիների ընթացքում մեղ բառացի յաբում էյին: Յերկրորդ՝ այն գամբիկները, վորոնք փաստորեն բեղմնավորվել էյին, մարուկ չավին և վիժեցին՝ շնորհիվ նրանց հանդեպ ցուցաբերվող անփութության:

Մննդի և բեղմնավորված գամբիկների թվի մեծ անհամա-

պատասխանութիւնն զգալի չափով բացատրվում է նրանով, վոր ձիապանները աշխուրհը հաշվելու սխառեմը շահագրգռութիւնն չեն ստեղծում զամբիկներին ժամանակին դուզավորելու և ծինը բարեհաջող կազմակերպելու գործով: Կենտկոմի հունիսյան պիւնտով վորոշման համաձայն, այդ սխառեմը փոխվեց, և ձիապանի աշխուրհը կազմվում են, նայած ծնված մտուկների քվին յեվ անեցման:

Յնա կարծում եմ՝ այժմ չի կարելի արդեն պատճառ բերել անտեսութիւնն վերակառուցման շրջանը, դասակարգային թշնամուն, գոնն այն ձևով, վորով ճանաչում էյինք նրան վերակառուցման շրջանում. այստեղ գործն այլ է:

Ի հարկէ, ձիերի թվի նվազումը չի կարող տեղի ունենալ առանց դասակարգային թշնամու ողնութիւնն, սակայն դասակարգային թշնամին 1934 թվականին կարող է դրսեվորել իրեն միւլիայն այն դեպքում, յերբ բոյսը նրան, ովքեր այնպես սիրում են մտանցույց անել դասակարգային բեմամուն, պարզապես փակեն իրենց աչքեր յեվ բողբեն, վոր դասակարգային բեմամին իր ուզածն անի: Ժամանակ է, վոր մեր աշխատողները դադարեն դասակարգային թշնամուն պատճառ բերելուց և հասկանան, վոր այժմ դասակարգային թշնամին կարող է գործել միմիայն նրանց անփութիւնով:

1934 թվականին ձիաբուծութիւնն համար ուրախալի փաստն այն է, վոր 1934 թվականի առ մեկն հուլիսի մի տարեկան քուսակները թիվը, համեմատած 1933 թ. առ մեկն հուլիսի թիվի հետ, ավելացել է 37,2 տոկոսով, իսկ բոլոր մատղաշները թիվը՝ 12,4 տոկոսով: Հենց մտադառնեքի անումն է այն հիմնական պայմանը, վորով արդեն 1935 թվականին պետք է ապահովենք ձիաբուծութիւնն վերելքը: 1935 թ. պետական պլանը նախատեսում է ավելացնել ձիերի թիվը 1,400 հազարով, ստանալ և մինչև վերջը պահպանել առնվազն 2,055 հազար քուսակ:

Հաշվառու շրջանում մեծ աշխատանք է կատարվել կոլաբնտեսային ձիաբուծութիւնը կազմակերպելու համար:

Ձիաբուծական ֆերմաների թիվը 1931 թվականին 1.479-ից, 1934 թվականի առ 1-ն զեկտեմբերի հասավ 4.726-ի նրանց անտուները թիվը, համապատասխանորեն, 106.529-ից հասավ 276.500 զլխի: Այսպիսով, յերեք տարվա ընթացքում ձիաբուծական ապրանքային ֆերմաների թիվն ավելացել է 294 տոկոսով և նրանց ձիերի թիվը՝ 244 տոկոսով:

Կոլտնտեսային ապրանքային ֆերմաներն այժմ ունեն

կոլտնտեսութիւնները ցեղական ու բարելավված ձիերի հիմնական մասսա: Սակայն կենտրոնացնելով լավագույն ձիերի յերամակը, ձիաբուծական ֆերմաները դեռ վոտ են ոգտագործում իրենց յերամակները՝ վերաբառաւորաբար մնում են ընդարձակելու ուղղութիւնը:

Ձիաբուծական ֆերմաները մինչև այժմ էլ չեն կարողացել կազմակերպել զամբիկների խնամքը յեվ նիտ ոգտագործումն աւխտաւանում: Վոչ լրիվ տվյալներով՝ 1934 թվականին վիժել է 1933 թվականի բեղմնավորված զամբիկների 3,7 տոկոսը:

1935 թվականին ձիաբուծական ապրանքային ֆերմաների թիվը պետք է հասնի 8512-ի և նրանց ձիերի թիվը՝ 478 հազարի:

Ձիաբուծական ապրանքային ֆերմաների աշխատանքն ավելի մեծ չափով կենտրոնացնելու և նրանց զիտա-տեխնիկական սպասարկումն ու ղեկավարումը բարելավելու նպատակով՝ 1935 թվականից կազմակերպվում են ձիերի պետական ցեղական 5 բուծարան:

Մեր ձիաբուծութիւնն վորակը բարձրացնելու գործում մեծ դեր են խաղում պետական ձիաբուծարանները: Ներկայումս Միութիւնն մեջ կա 111 ձիաբուծարան՝ 6327 հովտակներով, վորտեղ հովաքված են լավագույնները:

1932 թվականին պետական ցեղական անասնաբուծարանների հովտակներով բեղմնավորվել էր 267.000 զամբիկ, 1933 թվականին՝ 350.000 զամբիկ և 1934 թվականին՝ 317.000 զամբիկ:

Ցեղական հովտակների պետական ախոռների հետ միասին, զգալի չափով ավելացել են ձիաբուծարանները: Առ մեկն հունվարի 1930 թվականի՝ Սարերգային Միութիւնն մեջ կար ընդամենը 26 ձիաբուծարան՝ 7033 ձիով, իսկ առ մեկը հունվարի 1935 թ. ունենք 100 ձիաբուծարան՝ 104.610 ձիով:

Ձիաբուծարաններն զբաղվում են նաև ջրեբուծութիւնով: Առ մեկը հունվարի 1935 թվականի արտադրված ջրեկազմը և մատղաշ ջրորները կազմում էյին 1202 զլուխ, ընթացիկ տարվա վերջերին նրանց թիվը պետք է հասնի 1732 զլխի:

Բացի ձիաբուծարաններից, այս ժամանակաշրջանում կազմակերպվել է 2 ուղտաբուծարան: Նրանց ուղտերի ընդհանուր թիվը, առ 1 հունվարի 1935 թ. կազմում է 4.205 զլուխ: Ծրագրված է մինչև տարվա վերջը նրանց թիվը հասցնել 4.856 զլխի:

Վոչ մի հրեւի չի պահանջվում ձիաբուծութիւնը բարձրացնելու համար. անհրաժեշտ է միայն պահպանել ձիու խնամքի ամենա-

սարրուկան կանոնները— առաջին՝ ձին մաքուր պանել, յերկրորդ՝ ապահովել կերով, յերրորդ և ամենազլխաժորը՝ ձիչա պատրաստել և տալ կերը, չորրորդ՝ պանպանել ձիու, մանավանդ հղի զամբիկի, աշխատանքի սեփմը:

Մի խոսքով՝ հարկավոր են բոլորին բավ հայտնի և չափազանց հեշտ իրազործելի բաներ:

Շատ և խոսովել ձիապանի մասին, այն բանի մասին, վոր նրանք պետք և լինեն առանձնապես ստուգված մարդիկ, բայց և այնպես այդ մարդկանց ստուգումով և ընտրությամբ չեն զբաղվում:

ՎՈՉԻԱՐԱՄԱՀՈՒՅՅՈՒՆՆ ՈՒ ՁԻՍԲՈՒԾՈՒՅՅՈՒՆԸ ՊԵՏՔ Ե ԴԱՌԱՆ ԲԱՐՁՐ ՅԵԿԱՍՏԱԲԵՐ ՃՅՈՒՂԵՐ

Գյուղատնտեսության վերակազմակերպման տարիներին վոչխարապահությունն ամենամեծ կորուստն ունեցավ: 1928 թվականին վոչխարների թիվը կազմում էր 146.698 հազար և աստիճանաբար կրճատվելով՝ 1933 թվականին իջավ 55223 հազարի:

Վոչխարների ու այծերի թիվը առանձնապես կրճատվել և արդյունաբերական վոչխարապահության շրջաններում:

1934 թ. հուլիսի 1-ին, համեմատած 1933 թ. հուլիսի 1-ի հետ, ամբողջ Միության մեջ վոչխարների ու այծերի թիվը ավելացել էր 3,4 տոկոսով, ընդ վորում կոլտնտեսային հոտն աճել է 15,4 տոկոսով, վորից կոլտնտեսային ապրանքային ֆերմաների հոտը՝ 36,4 տոկոսով, խորհրատնտեսությունների հոտն աճել է 5,6 տոկոսով, կոլտնտեսականների հոտը համարյա անփոփոխ է մնացել, իսկ մենատնտեսների հոտը կրճատվել է 14,3 տոկոսով:

Ինորոշ առանձնահատկություն և այն, վոր 1934 թվականին վոչխարների թվի աճման ավելի բարձր տեմպ և նկատվում այն շրջաններում, վորտեղ նախորդ ժամանակաշրջանում առավելագույն կրճատում կար, այն է՝ Ղազախստանի ինքնավար ՍՊՀ-ում վոչխարների ու այծերի հոտն ավելացել է 22,4 տոկոսով, Արևմտա-այսյան Սիբիրում՝ 23,2 տոկոսով, Արևելյան Սիբիրում՝ 16,3 տոկոսով, Սարատովի յերկրում՝ 21,7 տոկոսով, Ստալինգրադի յերկրում՝ 11 տոկոսով, Թաթարստանի ինքնավար ՍՊՀ-ում՝ 15,2 տոկոսով, Իվանովոյի մարզում՝ 17,4 տոկոսով:

Սակայն վերոհիշյալ շրջանների վոչխարապահության արագ բարձրացման հետ միասին, մի շարք յերկրներում, մարդերում

և հանրապետություններում, 1934 թվականին ևս շարունակվել և անասունների թվի կրճատումը:

1934 թվականին վոչխարների թվի թույլ աճումը վորոշ չափով բացատրվում է նրանով, վար այժմ վոչխարք, կաթելի յե ասել հատուցում է անասունների մյուս տեսակների կորուստը: Կոլտնտեսականներն ու մենատնտեսները մատակարարելու պարտավորությունները կատարելիս առաջին հերթին վոչխար են հանձնում: Թվում է, թե այդ հանգամանքը պետք է հարկադրել ուժեղ թափով զբաղվել վոչխարի հարցով:

Սակայն մինչև այժմ էլ մեր աշխատողների մոտ վոչխարն ուշադրություն չի վայելում: Վոչխարի նկատմամբ այն կարծիքն է կազմվել, թե նա այնպիսի կենդանի չէ, վորը պետք է ամենինչ տա՝ և՛ բուրդ, և՛ մորթի, և՛ միս, և՛ կաթ՝ պանրի համար, բայց իր համար ամեն ինչ պետք է ինքը ձարի: Այս կարծիքի շնորհիվ, վոչխարը, վոր կարիք ունի խնամքի և մանավանդ ամեն տեսակ հիվանդություններից պահպանվելու, անտիրական է, հոտը չի կազմակերպված:

Մտադաշների 1934 թ. աշնան պահպանվելը վկայում է, վոր վոչխարաբուծության մեջ արդեն բոլոր նախադրյալներ կան հետագա արագ վերելի համար: Յեթե 1928 թվականին 100 վոչխարին ու այծին ընկնում էր 72,5 գառ և ուր, ապա 1934 թվականին հարյուրին ընկնում էր արդեն 79,8:

1934 թվականին նորից վերելքի շրջանն է թևակոխել այժմաբուծությունը: Այծերի թիվը, վոր 1928 թվականի 12980 հազար գլխից մինչև 1932 թվականին իջել էր 3648 հազարի, մինչև 1934 թվի հուլիսի մեկը այծերի թիվը հասավ 5076 հազարի:

Պետք է ասել, վոր մինչև այժմ վոչ մի ուշադրություն չի նվիրվել անասնապահության այդ ամենամեծնաատու տեսակին, և մենք այժմ նույնիսկ ճշտվել չգիտենք, թե վորքան այժմապահական ֆերմա ունենք: Մոտավոր հաշվարկումներով կա 600 այդպիսի ֆերմա՝ 200.000 գլուխ այծով:

Վոչխարների հոտի վերականգնումը պահանջում է մի շարք ամենալուրջ ձեռնարկումներ: Այստեղ, ինչպես և անասունների մյուս տեսակների նկատմամբ, ամեն ինչ վորոշում է խնամքը:

Պետք է ուշի ուշով ստուգել այն մարդկանց, որոնք նշանակված են կոլտնտեսային հոտը պահելու, շարժառիթով մարդկանց աշխատանքով, խոտի իրականացնելը և քննարկումները:

7063. 89 (3320-89)



մթերքով պարգևատրելը, ապահովել վոչխարին շենքով: Պետք է վճարար պայքար մղել այնքան լայնորեն տարածված հիվանդու-
թյան դեմ, ինչպիսին է ըստը:

Սափայն այդ բոլոր ձեռնարկումների նպատակն է միայն պահպանել հոտը և ապահովել նրա նորմալ աճումը, բայց չէ՛ վոր այստեղ կյանանն այն է, վոր վոչխարապահությունը կտրող է բարձր յեղատարբե նյութ դառնալ միմիայն այն ժամանակ, յերբ հոտը բարձրացվի:

Մեր վոչխարների հոտը հիմնականում բաղկացած է ցեղա-
դուրի, կողիա բուրգ ունեցող, վոչխարներից: Լայն չափով պետք է տարածվի մետախացումը, մանավանդ վոր արևնտական սերժ-
նափորումը, վոր սկսել է գործադրվել դեռ վերջերս, արդեն մտնել է գյուղացու կյանքում և հիտնալի արդյունքներ է տալիս, մա-
նավանդ կոլտնտեսային աղրանքային ֆերմաներում:

Կառավարութիւնն ընդունել է մի շարք վորոշումներ, վոր-
ոնք պետք է խրանեն վոչխարապահությունը. բարձրացվել է բրդի արժեքը, մասնատակարարումներից ազատվել են մերինոս, կա-
րակուլ և մորթատու վոչխարները, կոլտնտեսականները և մենա-
